ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 102- Ա

02 ապրիլի 2019 թ

## ԼՈՒՍԻՆԵ ԿԱՌԼԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքայի պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 792-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետը ու 8-րդ կետը և Լուսինե Կառլենի Վարդանյանի դիմումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի /ծածկագիր՝ 64-2.1-4/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Լուսինե Կառլենի Վարդանյանի հետ 2019 թվականի ապրիլի 2-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և նշանակումը:

Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

02.04.2019

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ